

# ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

## Աղիքային վարակիչ հիվանդություններ

2022 թվականի հոկտեմբեր ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 727 դեպք, ինչը մոտ 1.2 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հիվանդացությունը: Միաժամանակ՝ սեպտեմբեր ամսվա համեմատ դեպքերի թիվը նվազել է մոտ 1.3 անգամ: 2022 թվականի հոկտեմբեր ամսին աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել, համաճարակային իրավիճակը կայուն է:

## Սուր շնչառական հիվանդություններ

2022 թվականի 46-րդ շաբաթվա ընթացքում արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված (ՍՇՎ) միջին ինտենսիվության ակտիվություն, հիվանդացությունը ըստ 100000 բնակչի կազմել է՝ 197,1, ինչը նախորդ՝ 45-րդ շաբաթվա (ցուցանիշը՝ 182,8) համեմատ աճել է՝ 1,2 անգամ, իսկ նախորդ տարվա միննույն ժամանակահատվածի համեմատ (ցուցանիշը՝ 258.4)՝ ցածր է՝ 1,3 անգամ: ՀՀ մարզերից ՍՇՎ-ով ակտիվությունն առավել բարձր է Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում: Ըստ տարիքային խմբերի՝ առավել շատ հիվանդացությունը բարձր է 0-14 տարեկանների շրջանում: Շտապ օգնության կանչերի 9,7%-ը պայմանավորված են ՍՇՎ-ով:

Համաճարակաբանական հսկողության շրջանակներում լաբորատոր հետազոտության արդյունքում հայտնաբերվել են գրիպ Ա տեսակի H1N1 ենթատեսակի և H3 ենթատեսակի հարուցիչներ: Այլ շնչառական վարակների հարուցիչներ չեն հայտնաբերվել:

## Կորոնավիրուսային հիվանդություն

2022 թվականի նոյեմբերի 14-ի դրությամբ ՀՀ-ում արձանագրվել է 445513 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 15056.2), որից՝ 333-ը (0.1%) ստանում են բուժում, 434599 (97.4%) անձ առողջացել է, 8709 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 294.3) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 271 դեպք (հ.գ. 9.2 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (373 դեպք, հ.գ. 12.6 դեպք ըստ 100.000 բնակչության) նվազել է -27%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 7.4%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 6.5%:

Այս պահի դրությամբ վարակի վերարտադրության ցուցանիշը (7 օրվա հաշվարկով) կազմում է  $R_t=0.87$ :

### **Քիմիական թունավորումներ**

2022 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 253 դեպք, որոնց 45%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 55%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 32.8%-ը ալկոհոլային թունավորումներն են՝ արդյունք են ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունման, 22.5%-ը՝ դեղամիջոցներով՝ արդյունք են ինքնաբուժման, ինքնասպանության և ծնողի անուշադրության, 17%-ը՝ արդյունք են օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցության, 12.6%-ը արդյունք են թունավոր կենդանիների խայթոցի, 8.3%-ը՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցության, 3.6%-ը՝ թունաքիմիկատների, 2.8%-ը՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցության, 0.4%-ը՝ խոտաբույսից:

2022թ. հոկտեմբեր ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.5 անգամ:

### **Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

2022 թվականի հոկտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտների հիվանդացության ցուցանիշը նվազել է՝ նախորդ տարի արձանագրվել է 2, 2022 թ-ին՝ 1 դեպք:

### **Ջոնոգ և մակաբուծային հիվանդություններ**

2022 թվականի հոկտեմբեր ամսին հատուկ վտանգավոր վարակների՝ սիբիրյան խոցի, լեպտոսպիրոզի, կատաղության, տուլարեմիայի դեպքեր չեն արձանագրվել: Արձանագրվել է առաջնակի հայտնաբերված սուր բրուցելոզի 20 դեպք:

Հանգիստ է եղել նաև մալարիայի համաճարակային իրավիճակը, բերովի դեպքեր չեն արձանագրվել:

Արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 4 դեպք՝ Սյունիքի, Կոտայքի և Լոռու մարզերում:

Լայմի հիվանդության դեպքեր չեն գրանցվել: Տգերով փոխանցվող այլ հիվանդությունների, այդ թվում՝ Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի, անապլազմոզի,

ռիկետցիոզների տարածման վտանգը բարձր է՝ կապված տզերի բնական տարածագոտիների ընդլայնման և սահմանամերձ տարածքներից վարակի ներբերման, փոխանցողների վարակվածության վտանգի հետ:

### **Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

2022 թվականի հոկտեմբեր ամսին Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, փայտացման, կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, կապույտ հազի և հարկապույտ հազի դեպքեր: